ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2013 թվականի N 135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (68-3.1-12) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003թ. սեպտեմբերի 1-ի «Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 71 «Ն» որոշմամբ հաստատված աշխատակարգի 9-րդ կետի, **որոշում եմ.**

1.Հաստատել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 68-3.1-12/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

Բարսեղյան Կարեն	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ
Ասլանյան Սահակ	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
Գևորգյան Նունե	Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Աղաբեկյան Սարիկ	Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Աղամյան Տիմեյա	ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի ամբիոնի վարիչ, դոցենտ
Գրիգորյան Լյուդմիլա	<<Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ>> ՊՈԱԿ դասախոս

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Կարեն Բարսեղյանին, մրցութային հանձնաժողովի քարտուղար՝ Սահակ Ասլանյանին:

3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2013թ. սեպտեմբերի 23
ք. Կապան